ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հոկտեմբերի 2026 թվականի N 1562 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի N 1795-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածը և 34-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 16-ի «Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող ու մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1795-Ն որոշմամբ հաստատված հավելվածի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՑԱՆԿԸ» բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«

Ստանդարտի նշագիրը	Ստանդարտի անվանումը
ՀՍՏ 275	Լվացող միջոցներ. Ընդհանուր տեխնիկական պայմաններ

ՀՍՏ 284	Կենցաղային քիմիայի ապրանքներ. Ընդհանուր տեխնիկական պայմաններ
ԳՕՍՏ 25644	Սինթետիկ փոշեատիպ լվացող միջոցներ. Ընդհանուր տեխնիկական պահանջներ
ԳՕՍՏ 27076	Օպտիկական սպիտակեցուցիչ. Ջրում լուծելիության որոշման մեթոդ
ԳՕՍՏ 30024	Նյութեր մակերևութաակտիվ և միջոցներ լվացող սինթետիկ. Նմուշի բաժանման մեթոդներ
ԳՕՍՏ 32385	Ապրանքներ կենցաղային քիմիայի. Ջրածնային իոնների ակտիվության ցուցչի (pH) որոշման մեթոդ
ԳՕՍՏ 32386	Կենցաղային քիմիայի ապրանքներ. Ակտիվ քլորի որոշման մեթոդ
ԳՕՍՏ 32419	Քիմիական արտադրանքի վտանգավորության դասակարգում. Ընդհանուր պահանջներ
ԳՕՍՏ 32423	Օրգանիզմի վրա քիմիական արտադրանքի խառնուրդի ազդեցության վտանգի դասակարգում
ԳՕՍՏ 32443	Կենցաղային քիմիայի արտադրանք. Ամանեղենի մաքրվածության որոշման մեթոդ
ԳՕՍՏ 32444	Կենցաղային քիմիայի արտադրանք. Ֆոսֆոր պարունակող միացությունների որոշման մեթոդ
ԳՕՍՏ 32478	Կենցաղային քիմիայի արտադրանք. Ընդհանուր տեխնիկական պայմաններ
ԳՕՍՏ 32481	Կենցաղային քիմիայի ապրանքներ աերոզոլային փաթեթավորմամբ. Ընդհանուր տեխնիկական պայմաններ
ԳՕՍՏ 33483	Օծանելիքակոսմետիկական արտադրանք. Անվտանգության կլինիկալաբորատոր ցուցանիշների որոշման և գնահատման մեթոդներ
ԳՕՍՏ 32509	Մակերևութաակտիվ նյութեր. Ջրային միջավայրում կենսաքայքայման որոշման մեթոդ

ԳOUS 32893	Օծանելիքակոսմետիկական արտադրանք. Անվտանգության թունաբանական և կլինիկալաբորատոր ցուցանիշների գնահատման մեթոդներ
ԳOUS 33506	Օծանելիքակոսմետիկական արտադրանք. Անվտանգության թունաբանական ցուցանիշների որոշման և գնահատման մեթոդներ
ԳOUS ԻUO 10993-10	Բժշկական արտադրատեսակներ. Բժշկական արտադրատեսակների կենսաբանական ազդեցության գնահատում. Մաս 10. Զգայունացուցիչ ազդեցության հետազոտություն

»:

2. Սույն ցանկում ներառված միջպետական (ԳOUS) և ազգային (ՀUS) ստանդարտների կիրառման դեպքում հիմք է ընդունվում տվյալ ստանդարտի վերջին ինկորպորացված պաշտոնական գործող խմբագրությունը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից 6 ամիս հետո:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

29.10.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ